ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/09

«6» 05 2022 թ.

ք. Արարատ

«Արարատի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԱՌՎԱՀ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վալոդյա Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***ավտոմեքենաների վերանորոգման*** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.6 պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __3__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***4 200 000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:***

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արարատի համայնքապետարան	«ՎԱՌՎԱՀ» ՍՊԸ
ք. Արարատ Շահումյան 34	ք. Արարատ, Արարատ, Գայի 26Ա
Ֆին. նախ. գործառնական վարչ.	«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 900422101023	Հ/Հ 2201233303870000
ՀՎՀՀ 04240194	ՀՎՀՀ 04111761
Համայնքի ղեկավար՝ Ա.Ավետիսյան	Տնօրեն՝ Վալոդյա Մկրտչյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 6 » «05» 2022 թ. կնքված
«ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/09» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50111130	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություն	հատ	4 200 000	1	ք. Արարատ, Շահումյան 34	Պայմանագրի կնքման օրից մինչև 25/12/2022թ

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
Արարատի համայնքապետարան
ք. Արարատ Շահումյան 34
Ֆին. նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101023
ՀՎՀՀ 04240194
Համայնքի ղեկավար՝ Ա.Ավետիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ՎԱՌՎԱՀ» ՍՊԸ
ք. Արարատ, Արարատ, Գայի 26Ա
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220123330387000
ՀՎՀՀ 04111761
Տնօրեն՝ Վալոդյա Մկրտչյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 6 » « 05 » 2022 թ. կնքված
«ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/09» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

	Ծառայության անվանունը	չ/մ.	գին	Տեխնիկական բնութագիր
	Չափաբաժին 1			
1	Առջևի կոճղակ /փոխարինումով /колодка/	հատ	19 494,4	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
2	Ետևի կոճղակ /փոխարինումով/ колодка/	հատ	19 494,4	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
3	Հովացուցիչի փոկ/փոխարինումով/ ремень/ вентелятора	հատ	14 035,9	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
4	Առջևի մեղմիչ /փոխարինումով /амортизатор/	հատ	24 952,8	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
5	Հետևի մեղմիչ /փոխարինումով/ амортизатор/	հատ	23 393,2	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
6	Ճնշանի վռան/փոխարինումով/втулка рессора/	հատ	3 119,1	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
7	Առջևի բոմբ/փոխարինումով	հատ	2 339,3	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
8	Մեղմիչի գլխի ռեզին/փոխարինումով	հատ	2 339,3	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
9	Խլացուցիչի ռեզին/փոխարինումով /глушитель/	հատ	1 169,7	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
10	Հետևի արգելակի ափսե/փոխարինումով/ тарелка заднего тормоза/	հատ	14 815,7	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
11	Գլխավոր բաք/փոխարինումով/главный бачок/	հատ	42 107,8	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
12	Կոնուսի բաք/փոխարինումով/ бачок конуса/	հատ	17 155,0	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
13	Ձգաձող/փոխարինումով /тяга/	հատ	4 288,8	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
14	Հոդակապ /փոխարինումով /шарнир/	հատ	3 509,0	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
15	Բացքի ականոց/փոխարինումով/втулка развала/	հատ	2 339,3	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
16	Կայունարար/փոխարինումով /стабилизатор/	հատ	24 952,8	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
17	Կայունարարի ռեզին /փոխարինումով	հատ	1 403,6	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
18	Կախոց/փոխարինումով/подвесной/	հատ	4 678,6	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
19	Պլիտա երկաթե/փոխարինումով	հատ	155 954,9	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
20	Բենզինի զտիչ /փոխարինումով	հատ	2 339,3	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
21	Օդի զտիչ /փոխարինումով	հատ	1 559,5	2014թ. «Նիսան Սենտրա» մակնիշի ավտոմեքենաի համար
22	Կունգ /փոխարինումով ступица	հատ	17 155,0	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
23	Ծայրակալ /փոխարինումով/ наконечник/	հատ	3 898,9	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
24	Կունգի առանցքակալ /փոխարինումով /подшипник ступицы/	հատ	13 256,2	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար

25	Կարդանի լիսեռի առջևի մաս/փոխարինումով /передняя половинка карданного вала/	հատ	136 460,5	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
26	Ջրի պոմպ /փոխարինումով/водяной насос/	հատ	10 916,8	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
27	Հովացուցիչ /փոխարինումով /радиатор/	հատ	131 002,1	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
28	Բենզինի պոմպ /փոխարինումով/бензонасос/	հատ	12 476,4	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
29	Վառարանի փական/փոխարինումով/ краник печки/	հատ	7 018,0	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
30	Թերմոստատ /փոխարինումով/термостат/	հատ	37 429,2	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
31	Замок зяжигаеия	հատ	4 288,8	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
32	Դռան փական /փոխարինումով	հատ	11 696,6	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
33	Դռան փականի լեզվակ մեծ և փոքր/փոխարինումով	հատ	3 119,1	2015թ. «Նիվա Շևրոլետ» մակնիշի ավտոմեքենաի համար
34	Զսպանի գլխավոր թիթեղ /փոխարինումով/ главный лист рессора/	հատ	17 155,0	2007թ. Ուազ 3163-334 մակնիշի ավտոմեքենաի համար
35	Առջևի կոճղակ/Передняя колодка/	հատ	9 357,3	2007թ. Ուազ 3163-334 մակնիշի ավտոմեքենաի համար
36	Ջրի հովացուցիչ /փոխարինումով/ водяной радиатор/	հատ	53 024,7	2007թ. Ուազ 3163-334 մակնիշի ավտոմեքենաի համար
37	Առջևի հոդակապ /փոխարինումով/ шарнир/	հատ	2 573,3	2007թ. Ուազ 3163-334 մակնիշի ավտոմեքենաի համար
38	Անվահեծի հավասարակշռում/բալանսիրովկա/	հատ	545,8	2014թ. «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենաի համար
39	Անվահեծի վուլկանացում	հատ	545,8	2014թ. «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենաի համար
40	Անվախուցի նորոգում	հատ	1 559,5	2014թ. «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենաի համար
41	Անվախուցի փոխարինում	հատ	2 963,1	2014թ. «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենաի համար
42	Անվադողի նորոգում	հատ	545,8	2014թ. «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենաի համար
43	Անվադողի փոխարինում	հատ	545,8	2014թ. «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենաի համար
44	մեկնարկիչի վերանորոգում	հատ	29 631,4	2012թ. «Նիսան Սին» մակնիշի ավտոմեքենաի համար
45	Հարվածային ձգիչ փոխարինումով Ударная тяга	հատ	3 742,9	2012թ. «Նիսան Սին» մակնիշի ավտոմեքենաի համար
46	դինամոյի վերանորոգում	հատ	27 292,1	2012թ. «Նիսան Սին» մակնիշի ավտոմեքենաի համար
47	մեկնարկիչի վերանորոգում	հատ	17 934,8	2012թ. «Նիսան Սին» մակնիշի ավտոմեքենաի համար
48	ռելե-ռեգուլյատորի վերանորոգում	հատ	2 183,4	2012թ. «Նիսան Սին» մակնիշի ավտոմեքենաի համար
49	Ֆորդի մեկնարկիչի վերանորոգում	հատ	29 631,4	2010թ. «ֆորդ տրանզիտ» մակնիշի ավտոմեքենաի համար
50	Ֆորդի պրավոտկեքի փոխարինում	հատ	15 595,5	2013թ. «Վազ 21214-120-40» մակնիշի ավտոմեքենաի համար
51	Ֆորդի լուսարձակի վերանորոգում	հատ	21 053,9	2013թ. «Վազ 21214-120-40» մակնիշի ավտոմեքենաի համար
52	Կայունարարի կանգնակի վերանորոգում стоика стабилизатора	հատ	4 288,8	2013թ. «Վազ 21214-120-40» մակնիշի ավտոմեքենաի համար

53	Հարվածային ձգիչ փոխարինումով Ударная тяга	հատ	4 288,8	2013թ. «Վազ 21214-120-40» մակնիշի ավտոմեքենաի համար
54	Հոդակապ փոխարինումով шаровой	հատ	7 797,7	2012թ. «Նիսան Սին» մակնիշի ավտոմեքենաի համար
55	Բացքի ականոց ներքևի և վերևի փոխարինումով втулка развала	հատ	7 797,7	2012թ. «Նիսան Սին» մակնիշի ավտոմեքենաի համար
56	Կոճղակ փոխարինումով колодка	հատ	15 595,5	2012թ. «Նիսան Սին» մակնիշի ավտոմեքենաի համար
57	Արգելակի առջևի ափսե փոխարինումով передний диск тормоза	հատ	19 494,4	2012թ. «Նիսան Սին» մակնիշի ավտոմեքենաի համար
58	Արգելակի հետևի ափսե փոխարինումով задний диск тормоза	հատ	19 494,4	2013թ. «Վազ 21214-120-40» մակնիշի ավտոմեքենաի համար
59	Խաչուկ փոխարինումով креставин	հատ	6 238,2	2013թ. «Վազ 21214-120-40» մակնիշի ավտոմեքենաի համար
60	Կախոց փոխարինումով подвесной	հատ	9 357,3	2013թ. «Վազ 21214-120-40» մակնիշի ավտոմեքենաի համար
61	Մեղմիչ առջևի փոխարինումով амортизатор	հատ	23 393,2	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
62	Մեղմիչ հետևի փոխարինումով амортизатор	հատ	23 393,2	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
63	Հովացուցչի ռեմեն փոխարինումով ремень вентилиатора	հատ	7 797,7	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
64	Առջևի հարվածային ձգիչ փոխարինումով Ударная тяга	հատ	5 458,4	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
65	Ծայրակալ փոխարինումով наконечник тяги	հատ	7 797,7	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
66	Առանցքակալ փոխարինումով подшипник цапки	հատ	9 357,3	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
67	Ձեռքի արգելակի տրոս փոխարինումով կարճ/երկար	հատ	7 797,7	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
68	Յուղ լուկոյլ փոխարինումով	հատ	1 559,5	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
69	Յուղ 5/30 սինթետիկ փոխարինումով	հատ	3 898,9	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
70	Յուղ տապ 15 փոխարինումով	հատ	1 559,5	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
71	Թանձրամածուկ լիտոյլ փոխարինումով	հատ	1 949,4	2008թ. «Վազ 2121» մակնիշի ավտոմեքենաի համար
72	Յուղի զտիչ փոխարինումով	հատ	1 559,5	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
73	Օդի զտիչ փոխարինումով	հատ	2 339,3	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
74	Հետևի զսպան փոխարինումով	հատ	38 988,7	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
75	Գլխավոր լիստ փոխարինումով	հատ	17 155,0	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
76	Ենթագլխավոր լիստ փոխարինումով	հատ	17 155,0	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
77	Բռունցքի հավաքածու փոխարինումով	հատ	31 191,0	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
78	Հոդակապ փոխարինումով	հատ	2 573,3	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
79	Կոճղակ առջևի փոխարինումով	հատ	1 403,6	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
80	Կոճղակ հետևի փոխարինումով	հատ	1 715,5	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
81	Հովացուցիչ փոխարինումով радиатор	հատ	53 024,7	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար

82	Շկոռնու հավաքածու փոխարինումով	հատ	9 981,1	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
83	Ծայրակալ փոխարինումով	հատ	2 963,1	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
84	Սկավառակ-սալիկ-առանցքակալ փոխարինումովдиск-плита-выжимной подшипник	հատ	32 750,5	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
85	Խաչուկ փոխարինումով	հատ	2 183,4	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
86	Սուպեր փոխարինումով	հատ	32 750,5	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
87	Առջևի արգելակի փոկ փոխարինումով	հատ	1 715,5	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
88	Ստուպիցա հավաքածու փոխարինումով	հատ	10 760,9	2011թ. «Վազ 21074» մակնիշի ավտոմեքենաի համար
89	Ուժեղացուցիչ փոխարինումով	հատ	63 941,5	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
90	Ղեկային կալոնկա փոխարինումով	հատ	155 954,9	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
91	Կիսասոնի կարճ և երկար փոխարինումով	հատ	27 292,1	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
92	Գլխավոր բաք փոխարինումով	հատ	12 320,4	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
93	Կոնուսի գլխավոր բաք փոխարինումով	հատ	5 302,5	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
94	Զսպանի ռեզին սիլիկոնե փոխարինումով	հատ	1 169,7	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
95	Մեկնարկիչ փոխարինումով	հատ	29 631,4	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
96	Կուլիս փոխարինումով	հատ	5 302,5	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
97	Եղանիկ փոխարինումով	հատ	1 949,4	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
98	Կոնուսիտակի բաչոկ փոխարինումով	հատ	3 509,0	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար
99	Շկոռնու վերանորոգման հավաքածու փոխարինումով	հատ	5 458,4	1998թ. «Վազ 21099» մակնիշի ավտոմեքենաի համար

<u>Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայանից պահանջվող տեխնիկական պահանջներ</u>

1. Ծառայություն մատուցող կազմակերպությունը /Կազմակերպություն/ պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝
1.1 սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն,
1.2 վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը /ընթացամասի, շարժիչի, էլեկտրականության, յուղման, անիվների բացվածքի կարգավորման, վուլկանացման, իժեկտորի վերանորոգման, ղեկային մասի, փոխանցման տուփի և կամրջակների վերանորոգման, ինչպես նաև մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ/,

<u>2. Կազմակերպությունը՝</u>
2.1 Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ախտորոշումը՝ տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, դրանց ժամկետների հաստատված տեղեկանք,
2.2 Ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո առնվազն մեկ ժամվա ընթացքում սկսում է ավտոմեքենայի վերանորոգման գործընթացը /ծառայությունների մատուցումը/, ընդ որում վերանորորոգման աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանվում 2.1 կետում նշված տեղեկանքով հաստատված ժամանակահատվածը:
2.3 Փոխարինված ավտոպահեստամասերը պահանջի դեպքում պետք է վերադարձվի Պատվիրատուի ներկայացուցչին:

2.4 Պետք է տրամադրի ցանկում նշված նորոգված մասերի կամ փոփոխված դետալների երաշխիքային ժամկետ /այն տողերի մասով որոնց համար երաշխիքային ժամկետ հնարավոր չէ սահմանել պետք է ներկայացվի համապատասխան հիմնավորում/:

Երաշխիքներ

Կատարված աշխատանքների համար - 3 ամիս

Պահեստամասերի համար - 6 ամիս

Ռետինե դետալների համար - 3 ամիս

Բոլոր պահեստամասերը պետք է լինեն գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:

*Ծառայությունը պետք է մատուցվի Արարատ քաղաքում, կամ Արարատ քաղաքից առավելագույնը 1կմ հեռավորության վրա գործող ավտոտեխսպասարկման կետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արարատի համայնքապետարան
ք. Արարատ Շահումյան 34
Ֆին. նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101023
ՀՎՀՀ 04240194
Համայնքի ղեկավար՝ Ա.Ավետիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՎԱՌՎԱՀ» ՍՊԸ
ք. Արարատ, Արարատ, Գայի 26Ա
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 2201233303870000
ՀՎՀՀ 04111761
Տնօրեն՝ Վալերյա Մկրտչյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 6 » « 05 » 2022 թ. կնքված
«ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/09» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	50111130	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություն	... %	... %	... %	... %	1260000	1680000	2100000	2520000	2940000	3360000	3780000	4200000	**4200000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
Արարատի համայնքապետարան
ք. Արարատ Շահումյան 34
Ֆին. նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101023
ՀՎՀՀ 04240194
Համայնքի ղեկավար՝ Ավետիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ՎԱՌՎԱՀ» ՍՊԸ
ք. Արարատ, Արարատ, Գայի 26Ա
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 2201233303870000
ՀՎՀՀ 04111761
Տնօրեն՝ Վալոդյա Մկրտչյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արարատի համայնքապետարան
ք. Արարատ Շահումյան 34
Ֆին. նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101023
ՀՎՀՀ 04240194

ԿԱՏԱՐՈՂ
«ՎԱՌՎԱՀ» ՍՊԸ
ք. Արարատ, Արարատ, Գայի 26Ա
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 2201233303870000
ՀՎՀՀ 04111761

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն